

Հրատարակվում է

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ  
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ

SPONSORED BY  
THE COUNCIL OF EUROPE

**ASSOCIATION OF JUDGES OF THE REPUBLIC OF ARMENIA**

**EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS**

**COLLECTION OF JUDGMENTS**

*Edited by Alvina Gyulumyan*

Member of the Constitutional Court of the Republic of Armenia,

President of the Association of Judges of the RA

YEREVAN 2002

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

**ՎՃԻՌՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

**ՀՀ սահմանադրական դատարանի անդամ,  
ՀՀ Դատավորների միության նախագահ  
Ալվինա Գյուլումյանի ընդհանուր խմբագրությամբ**

**ԵՐԵՎԱՆ 2002**

**Տպագրվում է ՀՀ Ղատավորների միության  
խորհրդի որոշմամբ**

**Խմբագիր**

**ՀՀ սահմանադրական դատարանի  
աշխատակազմի գլխավոր մասնագետ  
Լիանա Հակոբյան**

Վճիռներն անգլերենից թարգմանել են.

Լուսինե Պողոսյանը  
Մարինա Մխիթարյանը  
Կարինե Բալայանը  
Սոնա Հովհաննիսյանը  
Վահե Ենգիբարյանը  
Աննա Ղազարյանը

ԿԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ

CASE OF KHAN v. THE UNITED KINGDOM  
(Գանգատ թիվ 52207/ 99-ի)  
2000թ մայիսի 12-ի

Վճիռը

Կանն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Երրորդ բաժանմունք), նիստ գումարելով որպես պալատ, դատավորների հետևյալ կազմով՝ պրն Ժ.-Պ.Կոստա, Նախագահ, պրն Վ. Ֆուրման, պրն Լ.Լուկայդես, պրն Պ.Կուրիս, պրն Նիկոլաս Բրատցա, տկն Յ.Ս.Գրև, պրն Կ.Թրաժա, դատավորներ

և տկն Ս.Դոլե, Բաժանմունքի քարտուղար,

1999թ. հոկտեմբերի 26-ի և 2000թ. մայիսի 4-ի դռնփակ խորհրդակցություններից հետո, 2000թ. մայիսի 4-ին ընդունեց հետևյալ վճիռը:

Վարույթը

1. Գործի համար առիթ է հանդիսացել 1997թ. հունվարի 1-ին Միացյալ Թագավորության քաղաքացի պրն Սուլթան Կանի («դիմող») կողմից նախկին 25-րդ հողվածի հիման վրա ընդդեմ Միացյալ Թագավորության Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովին («Հանձնաժողով») ուղղված գանգատը (թիվ 35394/97): Դիմողին ներկայացնում էր Շեֆիլդում աշխատող փաստաբան պրն Ջ. Դիկինսոնը: Միացյալ Թագավորության կառավարությունը («Կառավարություն») ներկայացնում էր Արտաքին և դաշնային վարչության ներկայացուցիչ պրն Ս.Ա.Վոմերսլին՝ Լոնդոն:
2. 1997թ. դեկտեմբերի 3-ին Հանձնաժողովը (Առաջին պալատ) որոշել է գանգատը ներկայացնել Կառավարությանը, և կողմերին առաջարկել է գրավոր բացատրություններ ներկայացնել գանգատի ընդունելիության և ըստ էության քննության վերաբերյալ:
3. Կառավարությունն իր գրավոր բացատրությունները ներկայացրել է 1998թ. մարտի 2-ին: Դիմողը պատասխանել է 1998թ. սեպտեմբերի 30-ին, այդ նպատակով սահմանված ժամկետի երկարաձգումից հետո: 1998թ.

- հոկտեմբերի 16-ին Կառավարությունը պատասխան բացատրություններ է ներկայացրել դիմողի գրավոր բացատրությունների վերաբերյալ:
4. 1998թ. նոյեմբերի 1-ին՝ թիվ 11 արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո, և վերջինիս 5-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթների համաձայն գործը ենթակա է Դատարանի քննությանը:
  5. Դատարանի կանոնակարգի 52-րդ կանոնի 1-ին կետի համաձայն Դատարանի նախագահ պրն Լ.Վիլդիաբերը գործը հանձնել է Երրորդ բաժանմունքին:
  6. 1999թ. ապրիլի 24-ին Դատարանը զանգատն ընդունելի է համարել և որոշել է կողմերին հրավիրել գործի ըստ էության քննությանը:
7. 1999թ. հուլիսի 7-ին Նախագահը թույլ է տվել «Արդարություն» և «Ազատություն» ոչ կառավարական կազմակերպություններին՝ գրավոր բացատրություններ ներկայացնել գործի առնչությամբ (Կոնվենցիայի 36-րդ հոդվածի 2-րդ կետ և Կանոնակարգի 61-րդ կանոնի 3-րդ կետ):
  8. Լսումը տեղի է ունեցել դռնբաց նիստում, Մարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգում, 1998թ. հոկտեմբերի 26-ին:

Դատարանի առջև հանդես են եկել՝

(ա) Կառավարության անունից՝

պրն Ս.Ա. Վոմերսլին,

ներկայացուցիչ,

լորդ Վիլյամս Մոստինը QC,

Գլխավոր դատախազ,

պրն Ջ. Սրոուն,

փաստաբան,

օր. Լ.Քոլինգ-Ռայսը,

օր. Մ.Ջոնսը,

խորհրդականներ.

(բ) դիմողի անունից՝

պրն Բ.Էմերսոնը,

պրն Կ.Ստարմերը,

փաստաբան,

պրն Ջ. Դիքենսոնը,

սոլիսիտոր:

Դատարանը լսել է լորդ Վիլյամսի և պրն Էմերսոնի ելույթները:

## Փաստերի վերաբերյալ

### 1. Գործի հանգամանքները

9. 1992թ. սեպտեմբերի 17-ին դիմողը Պակիստանից ժամանել է Մանչեստերի օդանավակայան: Նույն օդանավում էր նրա ազգական N.-ը: Երկուսին էլ կանգնեցրել և ստուգել են մաքսատան աշխատակիցները: N.-ի մոտ հայտնաբերվել է հերոին՝ մոտ 100.000 GBP շուկայական արժեքով: Նա հարցաքննվել է, ձերբակալվել և մեղադրվել: Դիմողի մոտ թմրանյութ չի հայտնաբերվել: Նա նույնպես հարցաքննվել է, բայց ոչ մի խոստովանություն չի արել: Նա ազատ է արձակվել և նրան մեղադրանք չի առաջադրվել: 1993թ. հունվարի 26-ին դիմողն այցելել է իր ընկերոջը՝ B-ին, Շեֆիլդում: B-ն հետաքննվում էր հերոինի առևտրով զբաղվելու կապակցությամբ: 1993թ. հունվարի 12-ին B.-ի տանը գաղտնալսման սարքի տեղադրումը թույլատրել էր Հարավային Յորքշիրի ոստիկանապետը՝ այն հիմքերով, որ հսկողության հանրաճանաչ մեթոդները դժվար թե կարողանային ապացույցներ տրամադրել առ այն, որ նա զբաղվում է թմրանյութերի առևտրով: Դիմողի այցելությունն այդ տուն չէր սպասվում կամ կանխատեսվում: Ոչ B.-ն, ոչ էլ դիմողը տեղյակ չէին ոստիկանության տեղադրած լսողական հսկողության սարքի առկայությանը:
10. Այդ սարքի միջոցով ոստիկանությունը ձեռք է բերել մի խոսակցության ձայնագրություն, որի ընթացքում դիմողն ընդունել էր, որ ինքը հանդիսանում էր 1992թ. սեպտեմբերի 17-ին N.-ի կողմից թմրանյութերի ներմուծման մասնակից: Դիմողը ձերբակալվել է 1993թ. փետրվարի 11-ին: Հարցաքննության ընթացքում նա կրկին ոչ մի խոստովանություն չի արել, բայց հետագայում նա և N.-ն միասին 1979թ. Մաքսային և արքիզային հարցերի կարգավորման մասին օրենքի և 1991թ. Թմրանյութերի չարաշահման մասին օրենքի հիման վրա մեղադրվել և դատապարտվել են:
11. Դատաքննությունը տեղի է ունեցել 1993թ. դեկտեմբերին: Դիմողն իրեն մեղավոր չի ճանաչել: Դիմողն ընդունել է, որ ինքը ներկա է եղել Շեֆիլդի նշված հասցեում և, որ իր ձայնը ժապավենի վրա ձայնագրվածներից մեկն է: Թագավորական դատարանի անունից ընդունվել է, որ գաղտնալսման սարքի տեղադրումը ներառել է քաղաքացիական իրավախախտում և սեփականությանը պատճառել է որոշ վնաս: Այդ իսկ պատճառով, դատավորը լսումը իրականացրել է «voire dire» սկզբունքով՝ ժապավենի վրա ձայնագրված խոսակցության որպես ապացույցի թույլատրելիության առնչությամբ: Թագավորական դատարանն ընդունել է, որ առանց դրա դիմողի դեմ ոչ մի գործ էլ չէր հարուցվի:
12. Դատավորը որոշել է, որ ապացույցը թույլատրելի է: Մեղադրական եզրակացությամբ դիմողը կրկին մեղադրվել է և մեղավոր է ճանաչվել՝ հերոինի ներմուծման արգելքը դիտավորությամբ խախտելու մեջ գիտակցաբար

ներգրավված լինելու համար: 1994թ. մարտի 14-ին դիմողը դատապարտվել է 3 տարի ազատազրկման:

13. Դիմողը Վերաքննիչ դատարան է դիմել այն հիմքով, որ ապացույցը պետք է համարվեր անթույլատրելի: 1994թ. մայիսի 27-ին Վերաքննիչ դատարանը մերժել է դատապարտման դեմ դիմողի բողոքը, բայց նաև որպես հանրային կարևորություն ներկայացնող իրավունքի հարց նշել է այն, թե արդյո՞ք առանց սեփականատերերի կամ բնակիչների գիտության մասնավոր տանը ոստիկանության կողմից տեղադրված գաղտնալսման սարքի միջոցով ձայնագրված խոսակցությունը քրեական գործում ընդդեմ մեղադրյալի թույլատրելի ապացույց է:

14. 1994 թ. հոկտեմբերի 4-ին Լորդերի պալատի վերաքննիչ կոմիտեն դիմողին թույլատրել է բողոքարկել Վերաքննիչ դատարանի՝ դատապարտման դեմ ուղղված բողոքը մերժելու մասին որոշումը: 1996թ. հուլիսի 2-ին Լորդերի պալատը մերժել է դիմողի բողոքը: Լորդերի պալատը նշել է, որ իր քննությանը հանձնված գործը երկու առանձին հարցեր է բարձրացրել. առաջինը՝ արդյո՞ք ձայնագրված խոսակցությունն ընդհանրապես թույլատրելի է որպես ապացույց, և երկրորդը՝ եթե թույլատրելի է, արդյոք այն, այնուամենայնիվ, դատավորի կողմից պետք է բացառվեր՝ ընդհանուր իրավունքի հիման վրա իր հայեցողությունն իրականացնելով կամ 1984թ. Ոստիկանության և քրեական ապացույցների մասին օրենքի (ՌԶՄ) 78-րդ բաժնով նախատեսված իրավասությունների հիման վրա: Ինչ վերաբերում է առաջին հարցին, Լորդերի պալատը որոշել է, որ Անգլիական իրավունքում չկա մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը, և եթե նույնիսկ նման իրավունք գոյություն ունենար, ընդհանուր իրավունքի կանոնը, ըստ որի՝ ոչ պատշաճ կերպով կամ նույնիսկ անօրինական ճանապարհով ստացված համապատասխան ապացույցը կլիներ թույլատրելի և կկիրառվեր նաև հսկողության սարքերի միջոցով անձանց մասնավոր կյանքին միջամտության արդյունքում ստացված ապացույցների նկատմամբ: Ինչ վերաբերում է երկրորդ հարցին, որոշվել է, որ այն փաստը, որ ապացույցը ձեռք է բերվել այնպիսի հանգամանքներում, որոնք հանդիսացել են Կոնվենցիայի 8-րդ հոդվածի դրույթների խախտում, վերաբերում է դատավորի հայեցողությանը՝ ընդունել կամ բացառել նման ապացույցը՝ ՌԶՄ-ի 78-րդ բաժնի հիման վրա: Դատավորի հայեցողությունը պետք է կիրառվեր՝ ելնելով այն հանգամանքից, թե արդյոք ապացույցի ընդունման թույլատրելիությունը դատավարությունը կդարձներ անարդարացի, իսկ 8-րդ հոդվածում ամրագրված՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտմամբ ստացված ապացույցի կիրառումը քրեական դատավարության ընթացքում չի նշանակի, որ դատավարությունը կդառնա անարդարացի: Փաստորեն, դատավորն իրավասու է եղել որոշելու, որ այն հանգամանքները, որոնցում ձեռք է բերվել համապատասխան ապացույցը, նույնիսկ եթե այդ դեպքում տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում, այնպիսիք չեն եղել, որ կպարտադրեին ապացույցի բացառումը: Լորդ Նոլանը, հանդես գալով Պալատի մեծամասնության անունից, ավելացրել է.

«Լորդերի պալատ այս գործի հասնելու միակ պատճառը ոստիկանության

կողմից հսկողության սարքերի օգտագործումը կարգավորող օրենսդրական

համակարգի բացակայությունն է: Նման համակարգի բացակայությունն

ամոթալի է՝ ավելի շատ օրենսդրական դաշտի տեսանկյունից, որը

կարգավորել է Անվտանգության ծառայության կողմից նմանատիպ սարքերի օգտագործումն սկսած 1989թ., և ոստիկանության, ինչպես նաև այլ ծառայությունների կողմից հեռահաղորդակցությունների գաղտնալսումը՝ 1985թ. սկսած: Ես ձեռնպահ կմնամ մեկ այլ մեկնաբանությունից, որովհետև պատասխանողի խորհրդականը կարող է մեզ տեղյակ պահել այն մասին, որ Կառավարությունն առաջարկում է տվյալ հարցի շուրջ օրենսդրական նախագիծ ներկայացնել խորհրդարանի հաջորդ նիստում»:

15. Դիմողն ազատվել է բանտից 1994թ. օգոստոսի 11-ին: Նրա ազատվելն ուժի մեջ էր մինչև 1995թ. մայիսի 12-ը:

## **II. Գործին առնչվող ներպետական օրենսդրությունը**

### **Ներքին գործերի վարչության ուղեցույցները**

16. Ոստիկանական հսկողական գործողություններում սարքերի օգտագործման մասին ուղեցույցները (1984թ. Ներքին գործերի վարչության ուղեցույցները) նախատեսում են, որ միայն ոստիկանապետերը կամ ոստիկանապետերի օգնականներն են իրավասու տալու նման սարքերի օգտագործման թույլտվություն: Ուղեցույցները կարելի է ձեռք բերել Համայնքների պալատի գրադարանում և դրանց կարելի է ծանոթանալ Ներքին գործերի վարչությանը ներկայացված դիմումի հիման վրա:
17. Յուրաքանչյուր դեպքում թույլտվություն տվող ոստիկանը պետք է ապահովի, որ պաշտպանվեն հետևյալ չափանիշները. ա) հետաքննությունը վերաբերում է լուրջ հանցագործության, բ) հետաքննության սովորական մեթոդները կիրառելու փորձերը եղել են ապարդյուն կամ իրերի բնույթն այնպիսին է, որ, հավանաբար, այդ մեթոդները կիրառվելու դեպքում արդյունք չեն տա, գ) լուրջ պատճառ կա կարծելու, որ սարքի օգտագործումը հավանորեն կհանգեցնի ձերբակալման և դատապարտման, կամ համապատասխան դեպքերում՝ ահաբեկչական գործողությունների կանխարգելմանը, դ) սարքի օգտագործումը պետք է լինի օպերատիվ առումով իրագործելի: Թույլտվություն տվող ոստիկանը պետք է համոզված լինի, որ հսկողության մեջ ներգրավված անձանց մասնավոր կյանքին միջամտելը համաչափ է հանցագործության լրջությանը:
18. Ուղեցույցներում նաև նշված է, որ կարող են լինել հանգամանքներ, երբ նման կերպով ձեռք բերված նյութերը կարող են համապատասխանաբար որպես ապացույց օգտագործվել հետագա դատական քննության ընթացքում:

### **Ոստիկանության դեմ ուղղված գանգատներ ընդունող մարմինը**

19. Ոստիկանության դեմ ուղղված գանգատներ ընդունող մարմինն ստեղծվել է ՈՔՀՄ-ի 89-րդ բաժնի համաձայն: Սա անկախ մարմին է, որն իրավասու է ստանալու ոստիկանների գործողությունների վերաբերող գանգատներ: Այն իրավասու է քրեական հանցագործությունների վերաբերյալ նյութեր հանձնել Գլխավոր դատախազին կամ անձամբ հարուցել կարգապահական վարույթ:

### **1984թ. օրենքը Ոստիկանության և քրեական ապացույցների մասին**

20. ՈՔՀՄ-ի 78-րդ բաժնի 1-ին կետը նախատեսում է.

«Ցանկացած վարույթում դատարանը կարող է մերժել՝ թույլատրելու մեղադրող կողմի ներկայացրած ապացույցը, եթե դատարանը գտնում է, որ, նկատի ունենալով բոլոր հանգամանքները, ներառյալ այն հանգամանքները, որոնցում ձեռք է բերվել ապացույցը, վերջինիս թույլատրումն այնպիսի բացասական ազդեցություն կունենա դատաքննության արդարացիության վրա, որ դատարանը չպետք է թույլատրի այն»:

### **1997թ. օրենքը Ոստիկանության մասին**

21. 1997թ. օրենքն օրենսդրական հիմք է հանդիսանում ոստիկանական հսկողության այնպիսի գործողությունների թույլտվության համար, որոնք ներառում են միջամտություն սեփականությանը կամ հեռահաղորդակցությունը: Հսկողության գործողությունների թույլտվությանը

վերաբերող համապատասխան բաժինները, ներառյալ՝ ընթացակարգերը, որոնք պետք է ընդունվեն թույլտվության ընթացքում, ուժի մեջ են մտել 1999թ. փետրվարի 22-ին:

## **Իրավունքի հարցեր**

### **1. 8-րդ հոդվածի վիճարկվող խախտում**

22. Դիմողը վիճարկում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում, որը նախատեսում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ... կյանքի,... և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք :

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտություն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

23. Դիմողը վկայակոչում է Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի կարծիքը Գովելն ընդդեմ Սիացյալ Թագավորության (27237/95, Հանձնաժողովի զեկույց 14.1.98) գործում, որտեղ հանձնաժողովը գտել է, որ գոյություն չունի գաղտնալսող սարքերի օգտագործումը կարգավորող որևէ համակարգ, և որ ներքին գործերի վարչության ուղեցույցները չունեն իրավաբանական պարտադիր ուժ և ոչ էլ մատչելի են: Հետևաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում, քանի որ ձայնագրումն այդ գործում չի կարող համարվել «օրենքով նախատեսված», ինչպես պահանջում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետը: Դիմողը պնդել

է, որ իրավիճակը նույնն է սույն գործում, որտեղ գաղտնալսող սարքն օգտագործվել է իր և B-ի միջև տեղի ունեցած մասնավոր խոսակցությունը գաղտնաբար լսելու համար:

24. Կառավարությունը, ում նկատառումները 8-րդ հոդվածի վերաբերյալ ստացվել էին, մինչև Հանձնաժողովի կողմից Գովելն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով զեկույցի ընդունումը, չի վիճարկել, որ դիմողի հսկողությունը հանդիսացել է միջամտություն Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված անձնական կյանքը հարգելու իրավունքին, բայց պնդել է, որ նման միջամտությունը հոդվածի խախտում չէ, քանի որ այն տեղի է ունեցել օրենքի համաձայն և անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում հանցագործությունը կանխելու համար:

Կառավարությունն ընդունել է, որ կանխատեսելիությունը «օրենքին համապատասխան» հասկացության բաղկացուցիչ մասն է, բայց նշել է, որ կանխատեսելիությունը չի կարող լինել նույնը ոստիկանական գաղտնի հսկողության համատեքստում, քանի որ այս դեպքում համապատասխան օրենքի խնդիրն է սահմանափակումներ նախատեսել անհատների գործունեության նկատմամբ: Կառավարությունը վիճարկել է, որ այն օրենքը, որը սահմանում է գաղտնի հսկողության միջոցառումներ ձեռնարկելու կամ չձեռնարկելու հայեցողություն, չի խախտում կանխատեսելիության պահանջները, եթե այդ հայեցողության շրջանակը և դրա իրականացման կարգը նշված են բավարար հստակությամբ: Կառավարությունը պնդել է, որ Ներքին գործերի վարչության ուղեցույցները հրապարակային են և մատչելի, չնայած դրանք չունեն օրենքի ուժ, և հսկողությունը սահմանափակվում է ծանր հանցագործությունների հետաքննությամբ:

Այնուհետև, կիրառված միջոցները համամասնական էին խնդրո առարկա քրեական հետաքննությանը: Կառավարությունը վկայակոչել է Վերաքննիչ դատարանի դատավճիռը, որը Կոնվենցիայի 8-րդ հոդվածը որոշակիորեն քննարկել է դիմողի գործի առնչությամբ: Վերջապես, Կառավարությունը պնդել է, որ Ոստիկանության դեմ ուղղված գանգատներ ընդունող մարմնի գոյությունը ցույց է տալիս, որ կան համապատասխան ընթացակարգային երաշխիքներ՝ կամայական միջամտության և լիազորությունների չարաշահումների դեմ:

25. Դատարանը նշում է, որ չի վիճարկվում այն հարցը, որ ոստիկանական հսկողությունը սույն գործում հանդիսացել է միջամտություն՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դիմողի իրավունքին: Սկզբունքային հարցն այն է, թե արդյո՞ք այդ միջամտությունն արդարացված էր 8-րդ հոդվածի 2-րդ կետով, այն է՝ արդյո՞ք այն «նախատեսված է օրենքով» և «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»՝ այդ կետում նշված նպատակներից որևէ մեկի համար:

26. Դատարանը համամիտ է Հանձնաժողովի հետ, որը Գովելի գործով նշել է, (կետեր 61 և 62), որ «օրենքով նախատեսված» արտահայտությունը պահանջում է ոչ միայն համապատասխանություն ներպետական օրենքին, այլ նաև վերաբերում է այդ օրենքի որակին, ինչը պետք է լինի համատեղելի իրավական պետության հետ (տե՛ս Հալֆորդն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 20605/92, կետ 49, ՄԻԵԴ, 1997-III): Հանրային իշխանությունների, այս դեպքում՝ ոստիկանության կողմից գաղտնի հսկողություն իրականացնելու համատեքստում, ներպետական օրենքը պետք է

պաշտպանություն ապահովի՝ 8-րդ հոդվածով նախատեսված՝ անձի իրավունքին կամայական միջամտության դեմ:

Ավելին, օրենքը պետք է բավականաչափ հստակ լինի իր հասկացությունների մեջ՝ պատշաճ կերպով անձին մատնանշելով այն հանգամանքները, որոնց դեպքում հանրային իշխանություններն իրավասու են նման գաղտնի միջոցների դիմել (Մալոնն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 8691/79, կետ 67, ՄԻԵԴ 1984):

27. Սույն գործի դեպքերի ժամանակ գաղտնալսող սարքերի օգտագործումը կարգավորող օրենսդրական համակարգ գոյություն չի ունեցել, չնայած 1997թ. Ոստիկանության մասին օրենքը այժմ նախատեսում է օրենսդրական նման շրջանակ: Ներքին գործերի վարչության ուղեցույցները գործին առնչվող ժամանակահատվածում պարտադիր իրավաբանական ուժ չեն ունեցել և ոչ էլ ուղղակիորեն մատչելի են եղել հանրությանը: Դատարանը նաև նշում է, որ լորդ Նոլանը Լորդերի պալատում մեկնաբանել է, որ անգլիական իրավունքում, ընդհանուր առմամբ, չկա անօրինական ոչինչ՝ անձնական կյանքի իրավունքի խախտման մասին: Հետևապես, չի եղել ներպետական որևէ օրենք, որը կարող էր գործին առնչվող ժամանակահատվածում կարգավորել գաղտնալսող սարքերի օգտագործումը:

28. Այստեղից հետևում է, որ միջամտությունը սույն գործում չի կարելի համարել «օրենքով նախատեսված», ինչպես պահանջում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետը: Համապատասխանաբար, տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում: Այս եզրակացության լույսի ներքո Դատարանից չի պահանջվում որոշել՝ արդյոք այս միջամտությունը «անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում»՝ ի շահ 8-րդ հոդվածի 2-րդ կետում նշված որևէ նպատակի:

## II. 6-րդ հոդվածի վիճարկվող խախտում

29. Դիմողը վիճարկում է նաև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում այն հիմքով, որ իր գործում միակ ապացույցի օգտագործումը, որը ձեռք է բերվել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտմամբ, համատեղելի չէ 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության հետ: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը նախատեսում է.

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշում են ... նրան ներկայացված ցանկացած մեղադրանքն, ունի ... արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք ...»:

30. Դիմողը չի պնդում, որ 6-րդ հոդվածը երաշխավորում է 8-րդ հոդվածի խախտմամբ ձեռք բերված ապացույցի ինքնաբերաբար բացառում, բայց վիճարկում է, որ այն դեպքերում, երբ ապացույցը ձեռք է բերվել Կոնվենցիայով նախատեսված իրավունքի խախտմամբ, ներպետական դատարանները պետք է իրականացնեն հետևյալ երեք պահանջը.

- դատաքննության ընթացքում պետք է լինի արդյունավետ ընթացակարգ, որի միջոցով դիմողը կարողանա վիճարկել ապացույցի թույլատրելիությունը.
- դատարանը պետք է հաշվի առնի խախտման բնույթը և,
- դատապարտումը չպետք է հիմնվի միայն Կոնվենցիայի իրավունքի խախտմամբ ստացված ապացույցի վրա:

Դիմողը վիճարկում է, որ ՈԲԶՄ-ի 78-րդ բաժնով սահմանված ընթացակարգն ի զորու չէ հիմք ապահովել՝ ապացույցը բացառելու համար, նկատի ունենալով, որ Լորդերի պալատի վճիռը ցույց է տալիս, որ 8-րդ հոդվածի խախտումը չի կարող հիմք ապահովել ապացույցը բացառելու համար՝ ըստ այդ բաժնի: Նա պնդում է, որ արդյունավետ ընթացակարգի բացակայությունը, ըստ որի նա կարող է հանդես գալ 8-րդ հոդվածի

խախտումով ստացված ապացույցն օգտագործելու դեմ, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում է:

31. Այնուհետև դիմողը պնդել է, որ խախտումն իր բնույթով հանդիսացել է Կոնվենցիայի հիմնարար խախտում, քանի որ լիովին բացակայել է օրենսդրական դաշտը, որով պետք է կարգավորվեր ոստիկանության կողմից գաղտնալսող հսկողության սարքերի օգտագործումը: Վերջապես, դիմողը նշել է, որ իրավակիրառ մարմինների կողմից բացառապես անօրինական ճանապարհով ստացված ապացույցով հիմնավորված քրեական դատապարտումը հակասում է իրավական պետության գաղափարին: Նա պնդում է, որ ինքը դեռևս հանդիսանում է արդար դատաքննության իրավունքի խախտման զոհ, չնայած նա փաստորեն մեղավոր է, և ճանաչվել է մեղավոր այն հանցագործությունը կատարելու համար, որի համար դատապարտվել է: Ներկա հանգամանքներում, եթե ապացույցը որպես անթույլատրելի բացառվի դատարանի կողմից, մեղադրող կողմը կդադարեցնի վարույթը: Դիմողը պնդում է, որ Դատարանի դերը ոչ թե արդարադատության իրականացման ստուգումն է, այլ արդյոք դիմողը մեղավոր է, թե անմեղ, կարողացե՞լ է իրականացնել իր արդար դատաքննության իրավունքը:

32. Կառավարությունը նկատել է, որ սույն գործը չափազանց նման է Շենկի գործին (Շենկն ընդդեմ Շվեյցարիայի, թիվ 10862/84, ՄԻԵԴ 1988-II), և պնդել է, որ դիմողը հնարավորություն ուներ (որը նա օգտագործել է) հանդես գալ “voire dire”-ում ձայնագրվածը որպես ապացույց օգտագործելու դեմ: Կառավարությունը նշել է, որ մանրագնին քննելով դիմողի փաստարկները, որ ոստիկանությունը չի ունեցել գաղտնալսման սարք տեղադրելու լիազորություն, և որ տեղի է ունեցել քաղաքացիական բնույթի իրավախախտում, Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում, նաև Ուղեցույցների

խախտում, դատավորը, այնուամենայնիվ, որոշել է, որ նման փաստարկները հիմք չեն կարող հանդիսանալ ապացույցը բացառելու համար՝ ՈՔՀՄ-ի 78-րդ բաժնի համաձայն, և, հետևաբար, ձայնագրված ժապավենն ընդունել է որպես ապացույց: Այնուհետև դիմողը հնարավորություն է ունեցել դատավորի որոշումը վիճարկել Վերաքննիչ դատարանում և Լորդերի պալատում: Լորդերի պալատը հատկապես որոշել է այն հարցը, թե արդյո՞ք դիմողն ունեցել է արդար դատաքննության իրավունք՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի նմանությամբ, և գտել է, որ այդ իրավունքի ոտնահարում տեղի չի ունեցել, նույնիսկ եթե ապացույցի ձեռքբերումը տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտմամբ:

33. Կառավարությունը ընդունում է, որ ի տարբերություն Շենկի գործում առկա իրավիճակի, ձայնագրությունը միակ ապացույցն է դիմողի դեմ: Այնուամենայնիվ, ըստ Կառավարության՝ եթե կա ակնհայտ ապացույց, որն ապացուցում է անձի ներգրավվածությունը լուրջ հանցագործության մեջ, ապա առկա է ակնհայտ հասարակական շահ՝ այն թույլատրելու քրեական վարույթում, նույնիսկ եթե դա միակ ապացույցն է մեղադրյալի դեմ, պայմանով, ինչպես այստեղ, որ մեղադրյալը հնարավորություն է ունեցել վիճարկելու ապացույցը և առարկելու դրա օգտագործման դեմ, և որ լիարժեքորեն նկատառումներ են ներկայացված դատարանի կողմից ապացույցի ընդունելիության արդարացիության վերաբերյալ: Վերջապես, Կառավարությունը պնդել է, որ դատավարության ընթացքում դիմողի կողմից մեղավորության ընդունումը համապատասխանում է 6-րդ հոդվածով նախատեսված «արդար դատավարության» արդարացիությունն ընդունելուն:

34. Դատարանը կրկնում է, որ իր պարտականությունն է, Կոնվենցիայի 19-րդ հոդվածի համաձայն, ապահովել Բարձր պայմանավորվող կողմերի՝

Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարումը: Մասնավորապես, իր գործառույթների մեջ չի մտնում քննել ներպետական դատարաններում տեղի ունեցած փաստի կամ իրավունքի վիճարկվող խախտումները, քանի դեռ դրանք չեն խախտում Կոնվենցիայով պաշտպանված իրավունքներն ու ազատությունները: Մինչ 6-րդ հոդվածը ապահովում է արդար դատաքննության իրավունքը, այն չի սահմանում ապացույցի թույլատրելիության որևէ կանոն, որը նախ և առաջ ներպետական օրենսդրությամբ կարգավորվող հարց է (վերոհիշյալ Շենկն ընդդեմ Շվեյցարիայի վճիռը, կետեր 45 և 46, և որպես ավելի նոր օրինակ, այլ համատեքստում, Տեքսիերա դե Կաստրոն ընդդեմ Պորտուգալիայի, թիվ 25829/94, կետ 34, ՄԻԵԴ 1998-IV): Դատարանի գործը չէ որոշել, որպես սկզբունքային հարց, արդյո՞ք ապացույցների որոշակի տեսակներ, օրինակ, անօրինական ճանապարհով ստացվածները, կարող են լինել թույլատրելի կամ, արդյո՞ք դիմողը մեղավոր էր, թե՛ ոչ: Այն հարցը, որին պետք է պատասխանել, հետևյալն է. արդյո՞ք դատաքննությունը, ամբողջությամբ վերցրած, ներառյալ ապացույցի ձեռքբերման ճանապարհը, արդա՞ր էր, թե՛ ոչ: Սա ընդգրկում է խնդրո առարկա «անօրինականության» քննությունը, և եթե խախտվել է Կոնվենցիայով նախատեսված այլ իրավունք՝ հայտնաբերված խախտման բնույթը:

35. Դատարանը վկայակոչում է, որ վերոհիշյալ Շենկի գործում դիմողը բողոքել է, *inter alia*, որ իր՝ Պ.-ի հետ զրույցի ձայնագրումը խախտում է Շվեյցարիայի օրենքները և իր դատաքննության ընթացքում դրա օգտագործումը՝ որպես ապացույց հակասում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին: Դատարանը իր վճռում նշել է, որ վիճելի չէ այն հարցը, որ խնդրո առարկա ձայնագրությունն ստացվել է անօրինական ճանապարհով՝ որպես

Շվեյցարիայի իրավունքի հարց, և այս փաստը հատկապես ճանաչվել է շվեյցարական դատարանների կողմից: Դատարանը նկատել է, որ ինքը չի կարող «բացառել որպես սկզբունքային և վերացական հարց, որ անօրինական ճանապարհով ստացված սույն տեսակի ապացույցը կարող է թույլատրելի լինել», և նա միայն պետք է պարզի՝ արդյո՞ք դիմողի դատաքննությունը՝ ամբողջությամբ վերցրած, արդար էր: Եզրակացնելով, որ վիճարկվող ձայնագրության օգտագործումը՝ որպես ապացույց, չի զրկել դիմողին արդար դատաքննությունից, Դատարանը նշել է, որ առաջինը՝ պաշտպանության իրավունքները չեն անտեսվել. դիմողին հնարավորություն է տրվել, որը նա օգտագործել է, վիճելի համարել ձայնագրության վավերականությունը և հակադրվելու դրա օգտագործմանը, ինչպես նաև հարցաքննելու Պ.-ին և դատակոչելու ձայնագրության կատարման համար պատասխանատու ոստիկանին: Դատարանն այնուհետև «ուշադրության է արժանացրել այն փաստը, որ՝ հեռախոսագրույցի ձայնագրությունը միակ ապացույցը չէր, որի վրա հիմնվում էր դատապարտումը» (վճռի կետ 48):

36. Վերջում Դատարանը նշել է նաև, որ ի հակադրություն Շենկի գործում քննության առնված իրավիճակի, գաղտնալսման սարքի տեղադրումը և դիմողի խոսակցության ձայնագրությունն անօրինական չէին՝ ներպետական քրեական օրենսդրությանը հակասելու իմաստով: Մասնավորապես, ինչպես նկատել է Լորդ Նոլանը, Անգլիական իրավունքում ընդհանուր առմամբ ոչինչ չկա մասնավոր կյանքի խախտման անօրինականության մասին: Ավելին, ինչպես նշվել է հետագայում, ոչ մի փաստարկ չի եղել առ այն, որ սարքը տեղադրելով՝ ոստիկանությունը գործել է Ներքին գործերի վարչության ուղեցույցներին անհամապատասխան: Ի հավելումն, ինչպես գտել է Լորդերի պալատը, Բ.-ի հետ խոսակցության ընթացքում դիմողի խոստովանությունը

տեղի է ունեցել կամավոր, ոչ մի մոլորություն չի եղել և դիմողին ոչինչ և ոչ ոք չի դրդել՝ կատարելու նման խոստովանություն: «Անօրինականությունը», որին վերաբերում է սույն գանգատը, վերաբերում է բացառապես այն փաստին, որ չի եղել ոչ մի օրենսդրական հիմք դիմողի՝ անձնական կյանքը հարգելու իրավունքին միջամտելու համար, և, համապատասխանաբար, նման միջամտությունը չի եղել «ըստ օրենքի», ինչպես այդ արտահայտությունը մեկնաբանված է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետում:

37. Այնուհետև Դատարանը նշում է, որ սույն գործում վիճարկվող նյութը, ըստ էության, միակ ապացույցն էր դիմողի դեմ, և որ դիմողին մեղավոր ճանաչելը հիմնվել է նրա վրա, որ դատավորը որոշել է ընդունելի համարել ապացույցը: Այնուամենայնիվ, քննվող նյութից զատ այլ ապացույցի գոյության պատշաճությունը կախված է գործի հանգամանքներից: Այնպիսի հանգամանքներում, երբ ձայնագրությունը համարվել է շատ լուրջ ապացույց, և երբ վտանգ չի եղել, որ այն կլինի անհուսալի, օժանդակ ապացույցի կարիքը համապատասխանաբար քիչ է զգացվել: Գնահատելով, որ Շենկի գործում Դատարանն ուշադրության է արժանացրել այն փաստը, որ խնդրո առարկա ձայնագրությունը դիմողի դեմ եղած միակ ապացույցը չէ: Այնուամենայնիվ, Դատարանը նշում է այս առնչությամբ, որ ձայնագրությունը Շենկի գործում, չնայած միակ ապացույցը չէր, բայց Վոդ Կանտոնալ դատարանի քրեական վճռաբեկ բաժնի կողմից նկարագրված է եղել որպես «հնարավոր վճռական ազդեցություն ունեցող, կամ գոնե՝ ոչ աննշան քրեական վարույթի արդյունքի համար» (կետ 28): Ավելին, այս տարրը որոշիչ գործոն չի եղել Դատարանի եզրակացության համար:

38. Սույն գործի կենտրոնական հարցն այն է, թե արդյո՞ք դատաքննությունը, ամբողջությամբ վերցրած, արդար է եղել: Հատկապես անդրադառնալով

վիճարկվող ձայնագրության թույլատրելիությանը, Դատարանը նկատել է, որ ինչպես և Շենկի գործում, դիմողը միանգամայն բավարար հնարավորություն է ունեցել վիճարկելու ձայնագրության թե՛ վավերականությունը, թե՛ օգտագործումը: Նա չի վիճարկել դրա վավերականությունը, բայց վիճարկել է դրա օգտագործումը “voire dire”-ի ընթացքում, և կրկին վերաքննիչ դատարանում և Լորդերի պալատում: Դատարանը նշում է, որ արդարադատության յուրաքանչյուր մակարդակում ներպետական դատարանները գնահատել են ապացույցի թույլատրման ազդեցությունը դատաքննության արդարացիության վրա, դիմելով ՈԲՅՄ-ի 78-րդ բաժնին, և դատարանները, այլ հարցերի թվում, քննարկել են հսկողության ոչ օրենսդրական հիմքերը: Այն փաստը, որ ցանկացած մակարդակում դիմողը հաջողության չի հասել, ոչինչ չի փոխում (տես վերը նշված Շենկի վճիռը, կետ 47):

39. Դատարանը կարող է ավելացնել, որ պարզ է, որ եթե ներպետական դատարանները լինեին այն կարծիքին, որ ապացույցի թույլատրելիությունը կառաջացներ էական անարդարացիության հարց, նրանք իրավասու էին բացառելու այն՝ ՈԲՅՄ-ի 78-րդ բաժնի համաձայն:

40. Այս հանգամանքներում Դատարանը գտնում է, որ դիմողի դատաքննության ժամանակ՝ գաղտնիորեն ձայնագրված նյութի օգտագործումը չի հակասում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված արդարության պահանջներին:

### III. 13-րդ հոդվածի վիճարկվող խախտումը

41. Դիմողը նաև վիճարկում է Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում այն հիմքով, որ դատարանները պետք է հաշվի առնեին, որ ապացույցն ստացվել է Կոնվենցիայի խախտմամբ: 13-րդ հոդվածը նախատեսում է.

«Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

42. Դիմողը պնդել է, որ ներպետական իրավունքի համաձայն՝ 8-րդ հոդվածի խախտումը չի բավարարում ՈԲՅՄ-ի 78-րդ բաժնով նախատեսված բացառման պահանջները, եթե նույնիսկ ստացված ապացույցը միակն է գործում: Այսպիսով, 78-րդ բաժինն ի զորու չէ պաշտպանության միջոց ապահովելու, որը կլինի պրակտիկ և արդյունավետ, ինչպես որ նախատեսված է 13-րդ հոդվածով:

Կառավարության այն պնդման առնչությամբ, որ Ոստիկանության վերաբերյալ բողոքներ ընդունող մարմինը նախատեսում է պաշտպանության երկրորդ միջոց, դիմողը կրկին մեջբերել է Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի եզրակացությունը Գովելն ընդդեմ Միացյալ Թագավորության (կետեր 68-70) գործում և պնդել է, որ ելնելով նրանից, որ Հանձնաժողովը 13-րդ հոդվածի խախտում է գտել այդ հանգամանքներում, Դատարանը պետք է հոդվածի խախտում գտնի նաև սույն գործում:

43. Կառավարությունը պնդել է, որ առկա են եղել 13-րդ հոդվածի պահանջները բավարարող պաշտպանության միջոցներ: Կառավարությունը պնդել է, որ դատարանները ՈԲՅՄ-ի 78-րդ բաժնի համաձայն իրավասու են հաշվի առնելու այն փաստը, որ ապացույցը ձեռք է բերվել այնպիսի հանգամանքներում, որոնք ենթադրում են Կոնվենցիայի 8-րդ հոդվածի վիճելի խախտում:

Կառավարությունը պնդել է նաև, որ դիմողը հնարավորություն է ունեցել բողոքելու Ոստիկանության վերաբերյալ բողոքներ ընդունող մարմնին՝

ոստիկանության ապօրինությունների առնչությամբ, և որ Բարձր դատարանը իրավազոր էր այդ Մարմնի նկատմամբ այն դեպքերում, երբ Մարմինը գործում է իր ընթացակարգի խախտումով, կամ ոչ պատշաճորեն:

44. Դատարանը կրկնել է, որ 13-րդ հոդվածը երաշխավորում է պաշտպանության միջոցի առկայությունն ներպետական մակարդակում՝ կատարելու համար Կոնվենցիայի իրավունքների և ազատությունների էությունը՝ ինչ ձևով էլ որ դրանք ապահովված լինեն ներպետական իրավակարգում: Այսպիսով, այն պահանջում է ներպետական պաշտպանության միջոցի առկայություն, որը թույլ կտա իրավասու ներպետական մարմիններին զբաղվել Կոնվենցիային առնչվող համապատասխան գանգատներով և վերականգնել իրավունքը, առանց, այնուամենայնիվ, պահանջելու Կոնվենցիայի ներառում (ինկորպորացիա) (տե՛ս Սմիթը և Գրեյդին ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 33985/96 և թիվ 33986/96, կետ 135, ՄԻԵԴ 1999): Սույն գործում 13-րդ հոդվածին վերաբերող գանգատը պետք է դիտվի որպես պնդում, թե դիմողը չի ունեցել արդյունավետ միջոցի հնարավորություն իր բողոքի՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի հիմքերով քննության համար: Դատարանը կարող է նկատել, որ դատարանները քրեական վարույթներում ի վիճակի չէին ապահովել պաշտպանության միջոց այն պատճառով, որ չնայած նրանք կարող են որոշում կայացնել քրեական վարույթներում ապացույցների թույլատրելիության արդարացիության մասին, նրանք իրավասու չեն գործ ունենալ Կոնվենցիայի էությանը վերաբերող գանգատների հետ՝ առ այն, որ դիմողի՝ անձնական կյանքը հարգելու իրավունքին միջամտությունը «օրենքին համապատասխան» չէր. նրանք նաև իրավասու չէին գանգատի առնչությամբ պաշտպանություն տրամադրել:

45. Ինչ վերաբերում է 8-րդ հոդվածի առնչությամբ դիմողի համար մատչելի՝ զանգատի մյուս այլ միջոցներին, Ղատարանը գտնում է, ինչպես և Հանձնաժողովը Գովելի գործում, որ բողոքները կարող են ուղղվել Ոստիկանության վերաբերյալ բողոքներ ընդունող մարմնին միայն այն հանգամանքներում, երբ այդ բողոքները հայտարարություններ են այն մասին, որ համապատասխան վարքագիծը հանգեցրել է մահվան, լուրջ վնասվածքների կամ Պետական քարտուղարի կողմից սահմանված տիպի բողոք է: Այլ հանգամանքներում տվյալ տարածքի ոստիկանապետը կարող է ինքը որոշել, թե արդյոք նա իրավասու մարմին է՝ գործը լուծելու համար: Եթե նա եզրակացնում է, որ ինքն իրավասու մարմին է, ապա սովորական ընթացակարգով իր իրավասության ներքո գտնվող որևէ մեկին նշանակում է՝ հետաքննությունն իրականացնելու նպատակով: Չնայած Ոստիկանության վերաբերյալ բողոքներ ընդունող մարմինը կարող է պահանջել, որ ՈԲՀՄ-ի 87-րդ բաժնի հիման վրա տրված զանգատը հանձնվի իր քննությանը, պարզ չէ, թե այդ մարմինը որքանով համապատասխան իշխանություն է ոստիկանապետի կայացրած որոշումը վերանայելու առումով (Գովել, կետ 68):

46. Ղատարանը նաև նշել է Պետական քարտուղարի կարևոր դերը Ոստիկանության վերաբերյալ բողոքներ ընդունող մարմնի որոշ անդամներին նշանակելու, վարձատրելու և, որոշ հանգամանքներում, հեռացնելու գործում: Մասնավորապես, Ղատարանը նկատում է, որ Օրենքի 105(4) բաժնի համաձայն Ոստիկանության վերաբերյալ բողոքներ ընդունող մարմինը պետք է առաջնորդվի Պետական քարտուղարի ուղեցույցներով՝ մերժելով կամ նախընտրելով կարգապահական տույժերը և քրեական վարույթները (Գովել, կետ 69):

47. Համապատասխանաբար, Ռատարանը գտնում է, որ բողոքների քննության համակարգը չի համապատասխանում անկախության այն պահանջվող չափանիշներին, որոնք անհրաժեշտ են իշխանության չարաշահման դեմ բավարար պաշտպանություն ապահովելու համար, և այդպիսով կապահովեն արդյունավետ միջոց՝ 13-րդ հոդվածի իմաստով: Այսպիսով, տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում:

#### **IV. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի կիրառումը**

Կոնվենցիայի 41-րդ հոդվածը նախատեսում է.

«Եթե Ռատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընծեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Ռատարանը, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի բավարարում է տրամադրում»:

#### **Ա.Վնասը**

48. Դիմողը չի ներկայացրել նյութական կամ ոչ նյութական վնասի փոխհատուցման պահանջ: Կառավարությունը գտել է, որ եթե արձանագրվի Կոնվենցիայի խախտում, վճիռն ինքնին կհանդիսանա բավարար և արդարացի բավարարում:

49. Դատարանն այն կարծիքին է, որ խախտման փաստի հաստատումն ինքնին կհանդիսանա համապատասխան արդար բավարարում՝ ի հատուցումն դիմողի կրած վնասի:

#### **Բ. Դատական ծախսեր և վճարումներ**

50. Դիմողը պահանջել է ընդամենը 14,69495 GBP, ներառյալ ավելացված արժեքի հարկը («ԱԱՀ»), որը կազմում է 10.810 GBP՝ փաստաբանների ստացած վարձավճարը. 3,884.95 GBP՝ սոլիսիտորի ծախսերը և վճարումները: Կառավարությունը նկատել է, որ դիմողը, փաստորեն, ներկայացրել է 2 գանգատ՝ մեկն ըստ 8-րդ և 13-րդ հոդվածների, իսկ մյուսը՝ ըստ 6-րդ հոդվածի: Կառավարությունը նշել է, որ քանի որ դիմողը բավարարում է ստացել իր գանգատների միայն մի մասով, ապա տրամադրվող գումարը պետք է համապատասխանաբար կրճատվի: Կառավարությունը գտել է, որ ամեն դեպքում, փաստաբանների վարձավճարները չափազանցված են և պնդել է, որ ընդամենը 7,391 GBP, ԱԱՀ-ն ներառյալ, ավելի համապատասխան կլինի:

51. Դատարանը, գնահատելով արդարացի հիմքով, դիմողին է տրամադրել 11,500 GBP գումար, գանձվելիք ցանկացած ԱԱՀ-ի հետ մեկտեղ, բայց այդ գումարից հանվել են որպես օգնություն Եվրոպայի խորհրդի կողմից արդեն վճարված գումարները:

#### **Գ. Տոկոսներ փոխհատուցումը չվճարելու դեպքում**

Համաձայն Դատարանի ունեցած տեղեկությունների, սույն վճռի ընդունման օրվա դրությամբ Միացյալ Թագավորությունում օրենքով սահմանված կիրառելի տոկոսադրույքը կազմում է տարեկան 7,5 տոկոս:

#### Այս հիմքերով Դատարանը՝

1. Վճռում է, միաձայն, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում,
2. Վճռում է, վեց ձայնով՝ ընդդեմ մեկի, որ տեղի չի ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում,
3. Վճռում է, միաձայն, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում,
4. Վճռում է, վեց ձայնով՝ ընդդեմ մեկի, որ  
(ա) պատասխանող պետությունը պետք է դիմողին վճարի սույն վճռի վերջնական դառնալու օրվանից հաշվված եռամսյա ժամկետում դատական ծախսերի և վճարումների դիմաց 11,500 (տասնմեկ հազար հինգ հարյուր) ֆունտ ստեռլինգ՝ ավելացված արժեքի հարկի հետ մեկտեղ. այս գումարը նվազեցվում է 11,090.30 (տասնմեկ հազար իննսուն) ֆրանսիական ֆրանկով (և 30 սանտիմով), որը կփոխարկվի ֆունտ ստեռլինգի սույն վճռի ընդունման օրվա դրությամբ փոխանակման կուրսով,  
  
(բ) այս գումարներից տարեկան 7,5 տոկոս պետք է վճարվի՝ սկսած վերոհիշյալ երեք ամիսը լրանալուց հետո մինչև վճարումը,
5. Մերժում է, միաձայն, արդարացի բավարարման մասին դիմողի պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով և ծանուցված է գրավոր՝ 2000թ. մայիսի 12-ին, Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն:

Ա. Դոլլե

Ժ.-Պ. Կոստա

Քարտուղար

Նախագահ

Կոնվենցիայի 45-րդ հոդվածի 2-րդ կետի և Դատարանի կանոնակարգի 74-րդ կանոնի 2-րդ կետի համաձայն սույն վճռին կցվում է պրն Լուկայդեսի մասնակի համընկնող, մասնակի չհամընկնող կարծիքը:

Ժ.-Պ.Կ.

Ս.Դ.

**Պրն Լուկայդեսի մասնակի համընկնող, մասնակի չհամընկնող կարծիքը**

Ես համաձայն եմ մեծամասնության հետ, որ այս գործում տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ և 13-րդ հոդվածների խախտում՝ վճռում նշված պատճառներով: Այնուամենայնիվ, ես համաձայն չեմ մեծամասնության այն եզրահանգմանը, որ 6-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

Սա Դատարանի առաջին գործն է, որում քրեական գործում մեղադրյալի դեմ միակ ապացույցը, որը հանգեցրել է նրա դատապարտմանը, այն ապացույցն էր, որն ստացվել էր Կոնվենցիայի 8-րդ հոդվածի դրույթների խախտմամբ:

Դատարանն արդեն միաձայն գտել է, որ դիմողի դեմ՝ գաղտնալսման սարքի միջոցով ձեռք բերված ապացույցի օգտագործումն առաջացրել է նրա՝ անձնական կյանքի հարգանքի իրավունքի խախտում, որովհետև այն կանոնակարգված չէր ներպետական որևէ օրենքով: Այնուամենայնիվ, մեծամասնությունը գտել է, որ տվյալ ապացույցի թույլատրումը և դիմողի

դատապարտումն այդ ապացույցի հիման վրա չի հակասում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված արդարացիության պահանջներին, չնայած դա դիմողի դեմ առկա միակ ապացույցն էր:

Ես չեմ կարող ընդունել, որ դատաքննությունը կարող է լինել «արդար», ինչպես նախատեսված է 6-րդ հոդվածով, եթե անձի մեղքը՝ ցանկացած հանցագործության դեպքում, հաստատվում է Կոնվենցիայով երաշխավորված մարդու իրավունքների խախտումով ստացված ապացույցների օգնությամբ: Իմ կարծիքով՝ «արդարություն» հասկացությունը, եթե քննում ենք Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համատեքստում, ենթադրում է իրավականության ապահովում, և այդ իսկ պատճառով այն ենթադրում է հարգանք Կոնվենցիայում սահմանված մարդու իրավունքների նկատմամբ: Ես չեմ կարծում, որ կարելի է խոսել «արդար» դատաքննության մասին, երբ այն կատարվում է օրենքի խախտումով: Ճշմարիտ է, որ Կոնվենցիան Միացյալ Թագավորության ներպետական իրավական համակարգի մաս չի կազմում, բայց, քննվող հարցի խնդիրներից ելնելով՝ Կոնվենցիան պետք է համարվի այդպիսին, նկատի ունենալով, որ այն վավերացվել է նշված պետության կողմից և դրանից բխում է Կոնվենցիայի դրույթները պետական մարմինների միջոցով կենսագործելու պարտականությունը: Այլ կերպ ասած՝ որոշելու համար, թե արդյո՞ք դատաքննությունն «արդար» էր, ես ոչ մի պատճառ չեմ տեսնում զիջումներ անելու Կոնվենցիան վավերացրած այն պետությանը, որը չի իրացրել իր համակարգում:

Ճշմարիտ է, որ այս գործում, դիմողի տանը գաղտնալսման սարք տեղադրելու միջոցով ստացված ապացույցը չի հակասում Միացյալ Թագավորության որևէ որոշակի օրենքի: Սակայն այն հակասում է Կոնվենցիային: Միացյալ Թագավորության իշխանությունները Մարդու

իրավունքների եվրոպական կոնվենցիայի 1-ին հոդվածով պարտավորվում են «իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովել այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայի I բաժնում»: Ես հավատում եմ, որ սա Միացյալ Թագավորության դատարաններին պարտավորեցնում է դատաքնության ժամանակ չհենվել այնպիսի ապացույցների վրա, որոնք ստացվել են Կոնվենցիայի խախտմամբ: Սա առավել ևս կիրառվում է այն գործերում, որոնցում նման ապացույցը միակ ապացույցն է մեղադրվողի դեմ՝ սույն գործին նման քրեական գործերում:

Ավելին, եթե համարվում է, որ Կոնվենցիայի խախտմամբ մեղադրվողի դեմ ձեռք բերված ապացույցն անպայմանորեն 6-րդ հոդվածով նախատեսված արդարության խախտում չէ, ապա Կոնվենցիայով նախատեսված իրավունքների արդյունավետ պաշտպանությունը կխափանվի: Սա լավ տեսանելի է սույն գործին նման գործերով, որոնցում ապացույցը ոստիկանության կողմից ստացվել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի պահանջներին անհամատեղելի ձևով, բայց, այնուամենայնիվ, այն ընդունվել է որպես մեղադրվողի դեմ եղած ապացույց և հանգեցրել է նրա դատապարտման: Եթե 8-րդ հոդվածի խախտումը կարելի է համարել «արդար», ապա ես չեմ կարող հասկանալ, թե ինչպես պետք է ոստիկանությունն արդյունավետորեն ձեռնպահ մնա նման անթույլատրելի վարքագծի կրկնումից: Եվ ես այստեղ պետք է կրկնեմ, որ չեմ կարող ընդունել, որ նման գործողության հետևանք հանդիսացած դատաքնությունն ու դատապարտումը կարելի է համարել արդար կամ արդարացի:

Անձնական կյանքի անձեռնմխելիության՝ պաշտպանվող իրավունքին հակասելով ստացված ապացույցի բացառումը պետք է համարվի իրավունքի

եական տարր, եթե նման իրավունքն ընդհանրապես որևէ արժեք ունի: Պետք է հիշել, որ Դատարանը շատ առիթներով շեշտել է, «որ Կոնվենցիան կոչված է երաշխավորել ոչ թե տեսական կամ երևակայական իրավունքներ, այլ իրավունքներ, որոնք գործնական են և արդյունավետ»: Նման ապացույցի բացառումը, իմ կարծիքով, դառնում է նույնիսկ ավելի հրամայական սույն գործին նման գործերում, ուր ոչ մի այլընտրանքային արդյունավետ պաշտպանության միջոց գոյություն չունի խնդրո առարկա իրավունքի խախտման դեմ:

Նման բացառող կանոնի դեմ հիմնական փաստարկը ճշմարտության և քրեական օրենքի արդյունավետ կատարման հարցում հանրային շահերի արժեքներն են, որոնք պարտադրում են վստահելի ու հուսալի ապացույցների թույլատրելիությունը, որովհետև հակառակ դեպքում այս արժեքները կտուժեն և մեղավոր մեղադրյալները կխուսափեն օրենքի պատժից: Օրենքը խախտելը, այն կիրարկելու նպատակով, հասկացությունների հակասություն է և անհեթեթ պնդում: Ցանկացած դեպքում, փաստարկը տեղ չունի այս գործի համատեքստում, որովհետև անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտմանը հանգեցնող ապացույցը կարող է թույլատրվել դատական վարույթներում և կարող է տանել հանցանքի համար դատապարտման, եթե նման ապացույցի ձեռքբերման պայմանները բավարարում են 8-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները, ներառյալ սույն գործի ապացույցը, այն է՝ որ այն ձեռք է բերվել «օրենքին համապատասխան»:

Մեծամասնությունն, իր եզրակացության հիմքում դրել են այն փաստը, որ «եթե ներպետական դատարանները գտնեին, որ տվյալ ապացույցի թույլատրումը կհանգեցնի եական անարդարացիության, նրանք իրավասու էին

ՈՔՀՄ-ի 78-րդ բաժնի հիման վրա (կետ 39) բացառել այն: Ես չեմ տեսնում ներպետական դատարանների մոտեցման համապատասխանությունը մեր հարցին՝ քննվող ապացույցի ընդունման արդարացիության վերաբերյալ, նկատի ունենալով, որ Անգլիական իրավունքի համաձայն՝ «արդարացիություն» հասկացությունը՝ ապացույցի թույլատրելիության համապատասխան ստուգման առնչությամբ, երբեք համատեղելի չի եղել անօրինականության հետ: Ապացուցման վերաբերյալ անգլիական համապատասխան իրավունքի համաձայն՝ անարդարացիությունն ունի սեղմ սահմանում և ծագում է միայն այն ժամանակ, երբ մեղադրյալի նկատմամբ կանխակալ կարծիքը՝ առաջացած ոչ պատշաճորեն ստացված ապացույցն ընդունելով, գերակշռում է նրա ապացուցողական արժեքին: Դեռ ավելին, Անգլիական իրավունքի համաձայն՝ ոչինչ անօրինական չէ, ինչպես որ սույն գործում, անձնական կյանքի անձեռնմխելիության ազատության խախտման դեպքում:

Վերոհիշյալի լույսի ներքո ես գտնում եմ, որ մեղադրյալի գործում գաղտնաբար ձայնագրված նյութի օգտագործումը և, հետևաբար, նրա դատապարտումը հակասում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդարության պահանջներին: